ՄԱՐՏԸ ԵՆԿ-Ի ՀԵՏ

Սիրելի՛ ընթերցողներ, սիրով ներկայացնում ենք Ձեզ ԵՆԿ հերթական ամսաթերթը, որում կպատմենք կազմակերպության մարտ ամսվա անցուդարձի մասին:

«UPSHIFT ՀԱՅԱՍՏԱՆ» ԾՐԱԳԻՐ

«UPSHIFT Հայաստան» դեռահասների զարգացման և զորակցման պիլոտային ծրագրի շրջանակում մենք ավարտեցինք տեղեկատվական հանդիպումները Գյումրիի և Սպիտակի ուսումնական հաստատություն-ներում:

Համայնքային ծրագրային գաղափարների հավաքագրման արդյունքում ստացանք 43 գաղափար, որոնցից ընտրվելու են 10-ը և այդ գաղափարներն առաջարկած պատանիներն ապրիլ ամսվա ընթացքում մասնակցելու են ծրագրերի մշակման վերաբերյալ մեկ օրանոց դասընթացի:

Անհամբեր սպասում ենք գաղափարների ընտրման արդյունքին :)

«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՃԱՆԱՉՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

«Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի ճանաչում» ծրագրի շրջանակում Գյումրիում, Ամասիայում, Աշտարակում, Վանաձորում, Սպիտակում և Երևանում տեղի ունեցան ֆոկուսխմբային քննարկումներ ծրագրի շահագրգիռ կողմերի հետ:

Իսկ մարտի 28-ին Երկխոսության մեդիա կենտրոնում տեղի ունեցավ մամուլի ասուլիս՝ նվիրված Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի մոդելի ջատագովմանն ուղղված այս ծրագրին:

Ասուլիսի ընթացքում ԵՆԿ ՀԿ նախագահ, երիտասարդական ոլորտի փորձագետ Արթուր Նաջարյանը, երիտասարդական ոլորտում հանրային քաղաքականության փորձագետ Աննա Եղոյանը, երիտասարդական աշխատանքի փորձագետ Կարեն Տերտերյանը և երիտասարդական ոլորտի հետազոտող Մարինա Գալստյանը ներկայացրին Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի անհրաժեշտության մասին, ինչպես նաև ծրագրի ընդհանուր նպատակը, առաջիկա գործողությունները և իրականացրած հետազոտության նախնական տվյալները:

Մարտի 29-ին ծրագրի թիմի անդամները հանդիպում-քննարկում ունեցան Գյումրու քաղաքապետարանի Մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լիլիթ Թովմասյանի հետ:

Հանդիպման հիմնական նպատակն էր՝ քննարկել Գյումրիում տեղական երիտասարդական քաղաքականության անհրաժեշտությունը, Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի ճանաչումը որպես երիտասարդների հետ աշխատանքի արդյունավետ միջոցի տարածման հեռանկարները և մարտահրավերները:

ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՇԱԲԱԹՕՐՅԱԿ 2019

Մարտի 23-ին մեր թիմը և կամավորները ևս միացան համապետական շաբաթօրյակին՝ մաքրելով «Լիլիթ» մանկապարտեզի և «Երիտասարդների տան» հարակից տարածքները:

Մեր լավ բարեկամ, Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Պյոտր Սվիտալսկին ևս անմասն չմնաց մաքրման աշխատանքներից և միացավ մեզ:

ԵՆԿ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՕՐ

Մարտի 27-ին կայացավ մեր հերթական տեղեկատվական օրը: Հանդիպման ընթացքում ներկաները հնարավորություն ունեցան տեղեկանալու մեր ծավալած գործունեության և իրականացվող տեղական և միջազգային ծրագրերի մասին՝ կենդանի գրադարանի մեթոդաբանությամբ:

Տեղեկատվական հանդիպմանը մասնակցեցին 18 երիտասարդ:

ՀՈՒՇԱԳԻՐ ՇՊՀ-Ի ՀԵՏ

Մարտի 12-ին մեր և Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի միջև ստորագրվեց փոխըմբռման հուշագիր երիտասարդության ոլորտում համագործակցության վերաբերյալ:

Հուշագրի նպատակն է օժանդակել կողմերի միջև համագործակցության ամրապնդմանը՝ տրամադրելով ՇՊՀ ուսանողներին և դասախոսական կազմին հնարավորություն՝ մասնակցելու ԵՆԿ ՀԿ-ի կողմից իրականացվող միջազգային ծրագրերին:

ERASMUS+ YOUTH. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Մարտի 5-ին Երևանում տեղի ունեցավ «Հնարավորություններ երիտասարդներին» խորագիրը կրող տոնավաճառը, որն իրականացրեցին «Երիտասարդների հնարավորությունների ակումբ» ՀԿ-ն և «Restart» ուսանողական-քաղաքացիական նախաձեռնությունը:

Տոնավաճառին ներկայացված էին 20 կազմակերպություն, որոնց թվում էր նաև Հայաստանում Erasmus+ Youth. Տեղեկատվական կենտրոնը:

ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՆԿ-Ի ՀԵՏ

Մարտ ամսվա ընթացքում մենք ունեցել ենք երեք միջազգային Էրազմուս+ ծրագիր:

Դրանցից մեկը Լեհաստանի Նովի Սաչ քաղաքում տեղի ունեցած «Water and us» խորագիրը կրող միջազգային Էրազմուս+ երիտասարդական փոխանակման ծրագիրն էր՝ ջրային ռեսուրսների և շրջակա միջավայրի վերաբերյալ:

Հայաստանից ծրագրին մասնակցում էին ԵՆԿ ՀԿ անդամներ Ռոզա Սիմոնյանն ու Մարիամ Դարբինյանը, «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի սաներ Ռազմիկ Նաջարյանն ու Հարություն Պապիկյանը, Երևանի պետական համալսարանի ուսանողուհի Մերի Մկրտչյանը, Կապանի թիվ 9 ավագ դպրոցի աշակերտուհի Դիանա Ստեփանյանը, Պոլիտեխնիկի ավագ դպրոցի աշակերտուհի Մանե Հովհաննիսյանը, Հայաստանում ֆրանսիական համալսարանի ուսանողուհի Աստղիկ Վարդանյանը:

Հայկական խումբը ղեկավարում էր ԵՆԿ ծրագրերի օգնական Օվսաննա Պապիկյանը:

Հաջորդը «ESC to Reality: QualiCaucasus» խորագիրը կրող միջազգային Էրազմուս+ դասընթացն էր՝ Եվրոպական համերաշխության կորպուսի վերաբերյալ, որը տեղի ունեցավ Վրաստանի Ռուսթավի քաղաքում:

Հայաստանից ծրագրին մասնակցում էին ԵՆԿ անդամ և ԿԱԶԱ հիմնադրամում ԵՀԿ մենթոր Ալմիրա Նիկողոսյանը, «Առաջին ներառական փուռ և սրճարան Գյումրիում» ծրագրի և «Էմիլի Արեգակ» կենտրոնի հաղորդակցության և հանրային կապերի մասնագետ Հասմիկ Թոփալյանը և «Առաջին ներառական փուռ և սրճարանի» մենեջեր Դիանա Քոչարյանը:

Իսկ ամսվա վերջում Լեհաստանում կայացավ երաժշտության և ներառականության թեմայով Էրազմուս+ երիտասարդական փոխանակման ծրագրի նախապատրաստական հանդիպումը, որին մասնակցում էին ԵՆԿ անդամ Ալմիրա Նիկողոսյանը՝ որպես խմբի ղեկավար և ԵՆԿ երիտասարդական աշխատող Անժելա Ջանոյանը՝ որպես խմբի աջակից անձ:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Մարտ ամսին մեր մեծ ընտանիքին միացավ ևս մեկ ԵԿԾ կամավոր:

Սառա Ֆաուազը Հայաստան է ժամանել Ֆրանսիայից և վեց ամիս շարունակ իր Եվրոպական կամավորական ծառայությունն է իրականացնելու ԵՆԿ-ում:

Պետք է նշենք, որ Սառան ապրիլ ամսից վարելու է Ֆրանսերենի խոսակցական ակումբ:

ԵՐԿԱՄՅԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Ուրախ ենք տեղեկացնելու, որ մեկնարկել է «CauCAN - Counter and Alternative Narratives for Human Rights in Caucasus» երկամյա համագործակցային ծրագիրը Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Հոլանդիայի, Ֆրանսիայի և Չեխիայի միջև՝ Էրազմուս+ ծրագրի աջակցությամբ, որի թեման է երիտասարդների կրթությունը մարդու իրավունքների վերաբերյալ՝ օգտագործելով Եվրոպայի խորհրդի We CAN ձեռնարկը:

Ծրագիրը Հայաստանում կիրականացնի Գյումրու «Երիտասարդական նախաձեռնություն-ների կենտրոն» ՀԿ-ն:

Գործընկերների մեկնարկային հանդիպումը տեղի ունեցավ Թբիլիսիում (Վրաստան) ս.թ. մարտի 17-21-ը, որին մասնակցեցին կազմակերպության ներկայացուցիչներ Մարիամ Ղարագյոզյանը և Լիանա Հակոբյանը:

ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Մարտի 30-ին տեղի ունեցավ Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի Տեղական խորհրդատվական խորհրդի հանդիպումը:

Հանդիպման ընթացքում ներկայացվեց կազմակերպության ընթացիկ և առաջիկա ծրագրերը, քննարկվեցին նոր գաղափարներ և «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի դրամահավաքի հետ կապված հարցեր:

ՄԱՐՏԸ «ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՏԱՆԸ»

«Երիտասարդների տունը», շարունակելով իր ակտիվ աշխատանքային գործունեությունը, իրականացնում է տարբեր ուսուցողական և թեմատիկ շաբաթներ, որոնք լի են հետաքրքիր աշխատարաններով, մրցույթներով ու վիկտորինաներով:

Ամիսը բացվեց «Գարնանամուտի» շաբաթով: Շաբաթվա ընթացքում տեղի ունեցան թեմատիկ աշխատարաններ, որին հաջորդեց ինտելեկտուալ խաղ-մրցույթը:

«Այլ կերպ խաղի առաջնություն» շաբաթվա շրջանակներում երիտասարդները, կազմելով խմբեր, փորձեցին իրենց գիտելիքներն ու կարողությունները:

« Պարային շաբաթվա» ընթացքում կենտրոնի երիտասարդները նախապես կազմված խմբերով հանդես եկան պարային տարբեր ոճերի բեմադրություններով: Շաբաթն ամփոփվեց «Հրայրք» ավանդական երգ ու պարի խումբ ճանաչողական այցով, որը հնարավորություն տվեց կենտրոնի երիտասարդներից մի քանիսին ծանոթանալ ազգագրական պարերին, նրանց պատմությանը և տեսակներին, ինչպես նաև երիտասարդները ծանոթացան և ընկերացան խմբի անդամների հետ:

«Թատրոնն ու մենք» թեմատիկ շաբաթվա շրջանակներում պատանիների հետ զրույց-հանդիպման էր հրավիրված ՀՀ վաստակավոր արտիստ, դերասան Հովհաննես Հովհաննիսյանը: Շաբաթն ամբողջացավ երիտասարդների կողմից ներկայացրած «Թատերական խաղեր» և «Թատերաբեմ» բեմադրությունների շարքերով:

Այս ամիս կենտրոնում անցկացվեց Յունիսեֆի «UPSHIFT Հայաստան» դեռահասների զարգացման և զորակցման պիլոտային ծրագրի տեղեկատվական հանդիպումը:

«Երիտասարդների տան» պատանիներից Հրաչյա Կյուրղինյանն այս ամիս ԵՄ պատվիրակության գրասենյակում հանդիպում և բացառիկ ձևաչափով հարցազրույց ունեցավ ԵՄ դեսպան Պյոտր Սվիտալսկու հետ:

«Երիտասարդների տան» շահառու աղջիկներից մի քանիսը ճանաչողական այց կատարեցին Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ և հնարավորություն ունեցան մասնակցելու «Հագուստի մոդելավորում և նախագծում» բաժնի երրորդ կուրսի ուսանողների դիպլոմային աշխատանքների հանձնմանը:

«Երիտասարդների տան» պատանիները ևս միացան համապետական շաբաթօրյակին՝ մաքրելով «Լիլիթ» մանկապարտեզի և «Երիտասարդների տան» հարակից տարածքները:

Այս ամիս կենտրոնի պատանիներից շատերը մասնակցեցին Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի կողմից կազմակերպած տեղեկատվական հանդիպմանը, որի ընթացքում ծանոթացան կազմակերպության աշխատանքներին ու առաջարկվող ծրագրերին: Կենտրոնի երիտասարդները հանդիպման շրջանակներում ներկայացրել էին «Երիտասարդների տունն» ու իրականացվող աշխատանքները: